Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
նոյեմբերի 9-ի N 1945 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ՓՈՐՁԱՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՈՉՆՉԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են գիտահետազոտական, փորձացուցադրական աշխատանքների համար գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (այսուհետ՝ ԳՁՕ) ներմուծման, արտահանման և ոչնչացման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետություն ԳՁՕ-ների ներմուծումը, արտահանումը հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

3. Հայաստանի Հանրապետություն ԳՁՕ-ների ներմուծումը թույլատրվում է լիցենզավորված գիտահետազոտական կազմակերպության կողմից գիտահետազոտական և փորձացուցադրական աշխատանքների իրականացման համար:

4. Լիցենզավորված գիտահետազոտական կազմակերպությունը պետք է ունենա ներմուծվող ԳՁՕ-ների գիտահետազոտական և փորձացուցադրական նպատակներով աշխատանքների իրականացման մասին պայմանագիր ԳՁՕ արտադրող կամ գիտահետազոտական այլ կազմակերպության հետ:

5. Հայաստանի Հանրապետություն ԳՁՕ-ների ներմուծումից առաջ լիցենզավորված գիտահետազոտական կազմակերպությունը գիտահետազոտական ծրագիրը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված մշտադիտարկման իրականացման նպատակով ստեղծված ԳՁՕ-ի հարցերով փորձագիտական խմբին (այսուհետ՝ փորձագիտական խումբ), որի կողմից ծրագիրը ներկայացնելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում տրվում է եզրակացություն՝ ներմուծվող ԳՁՕ-ների քանակների, ԳՁՕ-ների անվանման (գիտական և միջազգային), գենետիկական նյութի փոխանցման փաստերի,

շրջակա միջավայրի և մարդու համար ԳՁՕ-ների ռիսկի գնահատականի վերաբերյալ, իսկ որակավորման թեստերի իրականացման համար՝ փորձագիտական խմբի կողմից եզրակացությունը տրվում է ծրագիրը ներկայացնելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Հայաստանի Հանրապետություն գիտահետազոտական և փորձացուցադրական նպատակներով ԳՁՕ-ների ներմուծումը թույլատրվում է, եթե՝

1)առկա է արտահանող՝ ԳՁՕ արտադրող կամ այլ գիտահետազոտական կազմակերպության և ներմուծող գիտահետազոտական կազմակերպության միջև ԳՁՕ-ների գիտահետազոտական և փորձացուցադրական նպատակներով աշխատանքների իրականացման մասին պայմանագիր.

2) բուսական օրգանիզմները փաթեթավորված են թղթե կամ պոլիէթիլենային կամ կտորե կրկնակի փաթեթներով կամ պարկերով կամ տարաներով.

3) առկա է բույսի տեսակի, բույսի մասերի, քանակի, արտադրության տարեթվի, արտադրող երկրի և գիտահետազոտական կազմակերպության մասին տեղեկատվություններ պարունակող պիտակ.

4) առկա է ԳՁՕ-ների քանակական և որակական հատկանիշների վերաբերյալ փորձագիտական խմբի գիտահետազոտական և փորձացուցադրական նպատակներով ԳՁՕ-ների ներմուծման մասին եզրակացությունը՝ համաձայն N 1 ձևի:

7. Եզրակացությունը տրվում է, եթե առկա են արտահանող երկրի տարածքում այդ նույն ԳՁՕ-ների օգտագործումը նույն նպատակներով թույլատրված լինելու մասին փաստաթղթերը և առկա են կենսաանվտանգության վերաբերյալ համապատասխան վկայականներ կամ այդ ԳՁՕ-ների անվանումներն ընդգրկված են կենսաանվտանգության վկայականի ստացման ցուցակում կամ հանդիսանում են փորձարկման լաբորատորիայի կողմից ISO 17043 ստանդարտով հավատարմագրված կազմակերպություններից տրամադրվող որակավորման թեստերի համար անհրաժեշտ նմուշներ:

8. Հայաստանի Հանրապետության տարածքում տեղափոխումը պետք է իրականացվի փակ բեռնախցիկով տրանսպորտային փոխադրամիջոցով, բացառելով

տեղափոխման ժամանակ՝ արտահոսքեր: Արտակարգ իրավիճակների կամ արտահոսքի ժամանակ ԳՁՕ-ները պետք է մեկուսացվեն և գիտահետազոտական կազմակերպությունը դրա մասին անմիջապես պետք է տեղեկացնի Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը՝ նշելով միջադեպի վայրը:

9. Հայաստանի Հանրապետությունից ԳՁՕ-ների արտահանումն իրականացվում է, եթե՝

1) առկա է ներմուծող երկրի գիտահետազոտական կազմակերպության կամ սերմեր կամ տնկանյութ արտադրող կազմակերպության կողմից տրված փաստաթուղթ, որով հավաստվում է ԳՁՕ-ների և դրանց փորձանմուշների ձեռքբերումը.

2) բուսական օրգանիզմները փաթեթավորված են թղթե կամ պոլիէթիլենային կամ կտորե կրկնակի փաթեթներով կամ պարկերով կամ տարաներով.

3) առկա է բույսի տեսակի, բույսի մասերի, քանակի, արտադրության տարեթվի, արտադրող երկրի և գիտահետազոտական կազմակերպության մասին տեղեկատվություն պարունակող պիտակ.

4) առկա է ԳՁՕ-ների քանակական և որակական հատկանիշների վերաբերյալ փորձագիտական խմբի գիտահետազոտական և փորձացուցադրական նպատակներով ԳՁՕ-ների արտահանման մասին եզրակացությունը՝ համաձայն N 2 ձևի:

10. Լիազոր մարմինը ԳՁՕ-ների փորձանմուշների՝ սերմերի կամ տնկանյութերի ներմուծումից և (կամ) արտահանումից հետո ներմուծման և (կամ) արտահանման մասին տեղեկատվությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ վերահսկողության իրականացման նպատակով:

11. Գիտահետազոտական և փորձացուցադրական աշխատանքների ավարտից հետո, լիցենզավորված գիտահետազոտական կազմակերպության կողմից ԳՁՕ-ների փորձանմուշները, ստացված նմուշները ենթակա են ոչնչացման մեկուսացված համակարգում ավտոկլավի միջոցով:

12. Լիցենզավորված գիտահետազոտական կազմակերպության կողմից ԳՁՕ-ների փորձանմուշների, ստացված նմուշների ոչնչացման համար պատասխանատվություն է կրում գիտահետազոտական ծրագրի ղեկավարը:

13. Լիցենզավորված գիտահետազոտական կազմակերպությունը ոչնչացման դեպքում պետք է Մնդամթերքի անվտանգության տեսչական մարմին ներկայացնի ոչնչացումը հավաստող արձանագրություն և լուսանկարներ, որոնք ենթակա են հաշվառման և արխիվացման:

14. Սույն կարգով սահմանված պահանջները կիրառվում են «ներքին սպառման համար բացթողում» և «արտահանում» մաքսային ընթացակարգերով բաց թողնված ապրանքների նկատմամբ:

Ձև N 1

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Գիտահետազոտական կազմակերպությունը ----------
(իրավաբանական անձի անվանումը

_____
հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն)

Գտնվելու վայրը _____
(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը)

Ներմուծվող գենետիկորեն ձևափոխված օրգանիզմի անվանումը, քանակը ----------

_____
(հատ, կգ)

□ առկա են արտահանող երկրի տարածքում այդ նույն ԳՁՕ-ների օգտագործումը նույն նպատակներով թույլատրված լինելու մասին փաստաթղթերը:
□ առկա են կենսաանվտանգության վերաբերյալ համապատասխան վկայականները կամ այդ ԳՁՕ-ների անվանումներն ընդգրկված են կենսաանվտանգության վկայականի ստացման ցուցակում:
□ հանդիսանում են փորձարկման լաբորատորիայի կողմից ISO 17043 ստանդարտով հավատարմագրված կազմակերպություններից տրամադրվող որակավորման թեստերի համար անհրաժեշտ նմուշներ:

Եզրակացությունը տրվել է գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների հարցերով փորձագիտական խմբի անդամների կողմից:

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Գիտահետազոտական կազմակերպությունը ----------
(իրավաբանական անձի անվանումը,

_____
հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն)

Գտնվելու վայրը _____
(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը)

Արտահանվող գենետիկորեն ձևափոխված օրգանիզմի անվանումը, քանակը ----------

_____
(հատ, կգ)

Եզրակացությունը տրվել է գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների հարցերով փորձագիտական խմբի անդամների կողմից:

_____	_____
(ստորագրությունը)	(անունը, ազգանունը)
_____	_____
(ստորագրությունը)	(անունը, ազգանունը)
_____	_____
(ստորագրությունը)	(անունը, ազգանունը)
_____	_____
(ստորագրությունը)	(անունը, ազգանունը)
_____	_____
(ստորագրությունը)	(անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

10.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ